«ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ» ԴԻՄՈՒՄԸ ՏՐՈՒՄԵՆԻՆ, ՍՏԱԼԻՆԻՆ ԵՎ ՉԵՐՉԻԼԼԻՆ

ՆԵՈՒ-ՅՈՐՔ, 19 հուլիսի (ՏԱՍՍ).—Գրադրեսիվ «Ամերիկայի հայ ազգային խորհրդի» լիդերները մամուլում հայտարարություն են հրապարակել, որով նրանք դիմել են Տրումենին, Ստալինին ու Չերչիլլին, կոչ անելով Թյուրքիայի կազմի մեջ մտնող հայկական նահանգները վերադարձնել «Երանց միակ օրինական ներկայացուցչին՝ Սովետական Հայաստանին»։

Մատնացույց անելով Թյուրքական ասպատակությունները և Թյուրքերի կազմակերպած հայկական ջարդերը անցյալ դարերում, դիմումի մեջ այնուհետև ասված է. «Բերբերախտաբար Հայաստանի մի մասում, որը նախքան առաջին համաշխարհային պատերազմը մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ, ստեղծված է անկախ Հայկական ռեսպուբլիկա, որպես Սովետական Միության բ[illegible] կացուցիչ մաս։ Իր գոյության 25 տարիների ընթացքում Սովետական Հայաստանը գորգացել է վիթխարի քայլերով և հայերին տվել է անվտանգություն, որը գոյություն չի ունեցել անցյալի հայ պատմության մեջ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայերը կրկին անգամ ցույց տվին իրենց սերը դեպի ազատությունը և խիզախորեն մարտնչում էին դաշնակից ազգերի բանակներում, առանձնապես Միացյալ Նահանգների և Սովետական Միության զորքերում։

Մինչդեռ Թյուրքերը վարում էին իրենց տրադիցիոն երկերեսանի քաղաքականությունը։ Զեկոբության քոդի տակ նրանք օգնում էին նացիստներին և հիանում Գերմանիայի սկզբնական հաջողություններով։ Թյուրքիան պատրաստ էր բացէ ի բաց պատերազմի մեջ մտնելու Գերմանիայի կողմում, եթե նացիստները գրավեին Ստալինգրադը։ Այդ նույն ժամանակ Թյուրքիան նշել էր Թյուրքիայում մնացած հայ փոքրաթիվ բնակչությանը սեփականազրկելու և կեղեքելու նորանոր եղանակներ։ Թյուրքիայի կողմից ամենավերջին պահին Գերմանիային պատերազմ հայտարարելը ողորմելի ֆարս է։ Թյուրքերը դարերի ընթացքում տառապանքներ են պատճառել հայերին։ Ներկայումս Սովետական Հայաստանի և Սովետական Միության մյուս մասերի սահմաններից դուրս ապրում են մեկ ու կես միլիոն հայեր։ Այդ հայերի ճնշող մասը ուզում է վերադառնալ իր նախահայրերի երկիրը և մասնակցել նրա վերակառուցմանը։ Ամերիկահայերը երեք տերությունների լիդերների կոնֆերանսից թախանձագին խնդրում են հայ ժողովրդի հարցը դնել օրակարգում, որպեսզի արդարացիություն երաշխավորվի հայերի համար, որոնք նորից ցանկանում են ապրել իրենց պատմական հայրենիքում՝ Սովետական Հայաստանում»։

Այս հեռագիրը ստորագրել են Խորհրդի նախագահի տեղակալ Շահինյանը, քարտուղար Սարյանը և տնօրեն Վրթանեսը։